

ԲԱՆԱՄՐԱԿԱՆ

ԱՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՅ ՎԱՅԿԱՅԻ

(1263 — 1293)

ԺԴ. Դարու երկրորդ կիսուն Կիլիկիոյ մէջ ապրող նշանաւոր գրիչնը՝ կարիչներէն մին է Ստեփանոս Երէց Վահկացի, ձեռնասուն աշակերտ Յովհաննէս Արքայեղբօր: Իր գրչազրական աշխատութիւններէն ծանօթ են աւելի քան մէկ երկուասնեակ երկիր՝ պատուզ երեք տասնեակ տարիներու: Ան ընդհանրապէս ապրած և գործած է Կիլիկիոյ մայրաքաղաքին՝ Սիսի մէջ: Ժամանակադրական կարգի համաձայն իր երկերը կրիանք թուել սապէս:

1.— Աստուածաշունչ (մասնակի), օրինակած է 1263—1266 թուականներուն, Բարձրերդի մէջ, Յովհաննէս Արքայեղբօր հրամանով: — Զեռ. Երեւանի, թիւ 4243:

2.— Նոր կոտակարան (մասնակի), օրինակուած Գոների մէջ, Աւրղիկ Կոստանդին գրչի ձեռքով, 1265 թուին, Յովհաննէս Արքայեղբօր համար: Ստեփանոս Վահկացին և Գրիգոր Պիծակ կատարած են ծաղկութը: — Զեռ. Երեւանի, թիւ 196: Հմմտ. Հասկ Հայագիտական, Բ. Տարի, Անթիլիաս, էջ 58, Գարեգին Կաթողիկոս:

3.— Աստուածաշունչ (կիսատ), օրինակած է 1268ին, Յովհաննէս Արքայեղբօր պատուէրով: — Հմմտ. Հասկ Հայր. Բ. էջ 59:

4.— Յաղագս Նրկնայնոյ Քահանայապետութեան Դիոնէսիոս Արքապագացի, օրինակած է 1271ին, Յովհաննէս Արքայեղբօր համար, Յովհաննէս գրչի հետ միասին: — Զարքհանէլիան, Թրգմ. Նախնեաց, էջ 390:

5.— Աւետարան, 1274ին օրինակած և նկարազարդած է Սիսի Ս. Նշան Վանքին մէջ, Օչին Մարտախափ Համար: — Ձեռագիր ի Նիւ Եռք (Խախապէս Պատեան Տրդատ Եպիկոպոսի): — Հմմտ. Հասկ Հայր. Բ. էջ 61, 64: Հանդէս Ամորեայ, 1898, էջ 244-247:

6.— Ժամագիրք, օրինակած և նկարազարդած է 1274ին, Սիսի մէջ, Լևոն Բ. Բագաւորին համար: — Զեռ. Պր. Ժամ Լէզիի: — Հմմտ. Սիսի, 1949, էջ 137: Սիւրմէեան, Յուցակ Զեռ. Եւրոպայի, թիւ 23, էջ 36-42: Հասկ Հայր. Բ. էջ 49-57:

7.— Աւետարան, օրինակած է Կոստանդին Քէն. Աւրղիկ, 1274-5ին, Գոների: մէջ. Ստեփանոս Վահկացին խորանները ուրուազծած է միայն՝ առանց գունաւորելու: Կազմող՝ Վանական Քահանայ (1276): Ստացող՝ Դաւիթ Քահանայ: — Զեռ. Երեւանի, թիւ 7534: Հմմտ. Հասկ Հայր. Բ. էջ 59:

8.— Աւետարան, օրինակած է 1279ին, Սիսի Ս. Հոգի Վանքին մէջ, Սոսթինէս Վարդապետի համար: — Հմմտ. Կոնիքիր, Յուցակ, թիւ 8: Զարր., Պատմ. Հայ Հին Դպրութեան, 1932, էջ 797-8: Հասկ Հայր. Բ. էջ 59:

9.— 1280ին Սիսի մէջ օրինակած և նկարազարդած է ձեռագիր մէջ, «այժմ Բիթ. Թանգարանում»: — Հմմտ. Յիշտառակարանք Զեռագրաց, Անթիլիաս, էջ 1056:

10.— Աւետարան մը օրինակած և նկարազարդած է 1286ին, «ի ծեր Հասակի», Յովհաննէս Արքայիղբօր պատուէրով.— Հմմտ. Հասկ Հայդ. Բ. էջ 59:

11.— Ժողովածուի մը օրինակութեան մասնակցած է Թորոս Գրչի և Արքայիղբայր Յովհաննէսի հետ: Այս վերջինը ձեռազգին Ստացողն ալ է.— Զեռ. Երևանի, թիւ 3710:

12.— Դրած է Ժողովածուի մը առաջին ժամը, Թօսորէի որդի Օշինի համար: Երկրորդ ժամը գրած է Գրիգոր Երէց.— Զեռ. Երևանի, թիւ 4086: Հմմտ. Հասկ Հայդ. Բ. էջ 59:

13.— Աւետարան մը, օրինակուած Վահրամ Գրչէն, 1293ին, Գոների վանքը, սրբազրուած է Գրիգոր և Վահկացի Ստեփանոս քահանաներուն կողմէ.— Զեռ. Ս. Յ. Թ. 2612: Հմմտ. Հասկ Հայդ. Բ. էջ 59:

Ստեփանոս Վահկացին կր նկատուի Հեղինակ նաև քանի մը երկերու, ինչպէս.

1.— Ճառ Ներքողական Ս. Գր. Լուսաւորչի.— Հմմտ. Լ. Ս. Խաչիկէան, Յիշտ. ՃԴ. Դարի, 1950, էջ 185: Զեռ. Երևանի, թիւ 4086:

2.— Արարածոց Գիրք.— Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 516:

3.— «Երկասիրութիւն մի Հմատական».— Սիսուան, էջ 536:

Ն. ԱՐՔ. ԵՐՎԱԿԱԿԱՆ

